ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/62/2025

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 17 փետրվարի 2025թ.

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), մասնակցությամբ Հանձնաժողովի անդամներ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի, Արմեն Մարուխյանի և Լիլիթ Ալեքսանյանի, 2025 թվականի փետրվարի 17-ին քննելով ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավար Հակոբ Սուրենի Բալասյանի նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով հարուցված թիվ ՎԻՎ/62/2025 վարչական գործը.

ՊԱՐԶԵՑ

1. **Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.**

1.1 Հանձնաժողովը, ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով իրականացրել է հայտարարատու պաշտոնատար անձ հանդիսացող, ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավար Հակոբ Բալասյանի կողմից Հանձնաժողով ներկայացված 2023 թվականի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի հայտարարագրում (այսուհետ՝ Հայտարարագիր) հայտարարագրված տվյալների արժանահավատության և ամբողջականության ստուգում, որի արդյունքում արձանագրվել են հետևյալ իրավախախտումները՝

1. Հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում չի հայտարարագրվել կնոջ՝ Աննման Ղուկասյանի «Արզնի Էքսպրես» ՍՊ ընկերության 50% բաժնեմասի, ինչպես նաև «Ջրաքար» ՍՊ ընկերության 100% բաժնեմասի վերաբերյալ տվյալները:
2. Հայտարարագրի «Ե.2. Ներկայացվածությունն առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում չի հայտարարագրվել կնոջ՝ Աննման Ղուկասյանի «Արզնի Էքսպրես» և «Ջրաքար» ՍՊ ընկերությունների գործադիր մարմնի ղեկավար հանդիսանալու վերաբերյալ տվյալները:

1.2 Հանձնաժողովը ձեռք բերված և ուսումնասիրված վերը նշված տվյալների հիման վրա արձանագրել է, որ առերույթ առկա են Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանքի հատկանիշներ և 2025 թվականի փետրվարի 5-ին Հակոբ Բալասյանին հասցեագրել է թիվ 01/492-2025 գրությունը, հրավիրելով Հանձնաժողով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելուն և գործի քննությանը մասնակցելու: Նշված գրությունը Հակոբ Բալասյանը ստացել է 2025 թվականի փետրվարի 7-ին՝ դրա մասին հավաստելով Հանձնաժողով ներկայացված գրությամբ: Միաժամանակ, նույն գրությամբ Հակոբ Բալասյանը ներկայացրել է միջնորդություն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ

արձանագրություն կազմելու օրը տեղափոխելու մասին: Հանձնաժողովի 2025 թվականի փետրվարի 10-ի 01/563-2025 գրությամբ Հակոբ Բալասյանը ծանուցվել է միջնորդությունը բավարարելու և վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման օրը տեղափոխելու մասին:

1.3 2025 թվականի փետրվարի 12-ին Հակոբ Բալասյանի ներկայությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ12/2025 արձանագրությունը՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշներով:

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Հակոբ Բալասյանի բացակայությամբ 2025 թվականի փետրվարի 17-ին՝ ժամը՝ 11:00-ին, տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն:

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումը ու պարզաբանումները

Հակոբ Բալասյանը 2025 թվականի փետրվարի 12-ին վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման ժամանակ Հանձնաժողովին հայտնել է, որ որևէ միտում կամ դիտավորություն չի ունեցել օրենքով պահանջվող տվյալները չհայտարարագրելու մասին, ինքը լրացրել է հայտարարագրի թղթային տարբերակը, իսկ տվյալները հայտարարագրման էլեկտրոնային համակարգում լրացրել է իր օգնականը: Լրացման ժամանակ, քանի որ համապատասխան աղյուսակի վերնագրում գրված չի եղել, որ իր ընտանիքի անդամների շահերը ևս պետք է հայտարարագրի, կարծել է, որ իր վերաբերյալ տվյալները պետք է հայտարարագրի:

Խնդրել է դիտարկել, որ արձանագրված խախտումը հանդիսանում է լրացման կարգի խախտում և նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ իրավախախտումը

դրսևորվում է առաջին անգամ, քանի որ ինքը առաջին անգամ է տեղեկանում, որ այդ տվյալները պետք է հայտարարագրվեին:

III Վարույթի համար էական նշանակություն ունեցող փաստեր

Հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ ՎԻՎ/62/2025 գործում առկա նյութերը, կատարել է հանգամանքների քննություն և հաստատված է համարում հետևյալը՝

3.1 ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 10-ի թիվ 58-Ա որոշման համաձայն՝ Հակոբ Սուրենի Բալասյանը ընտրվել է ՀՀ Կոտայքի Մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավար: ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի պաշտոնական կայքէջում առկա տեղեկության համաձայն՝ Հակոբ Սուրենի Բալասյանը մինչ օրս զբաղեցնում է համայնքի ղեկավարի պաշտոնը (https://www.byureghavan-kotayk.am/Pages/Home/Default.aspx):

3.2 Օրենքի 34-րդ հոդվածով սահմանված կարգավորումների համաձայն՝ հանդիսանում է գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

3.3 ՀՀ ԱՆ ՔԿԱԳ տվյալների շտեմարանի համաձայն Աննման Ազատի Ղուկասյանը հանդիսանում է հայտարարատու պաշտոնատար անձի կինը:

3.4 ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տվյալների համաձայն՝ Հակոբ Բալասյանի կինը՝ Աննման Ղուկասյանը 1995 թվականից հանդիսանում է «Արզնի Էքսպրես» ՍՊ ընկերության 50% բաժնեմասի սեփականատերը, իսկ 2007 թվականից՝ նաև գործադիր մարմնի ղեկավար: Պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքում առկա տվյալների համաձայն՝ «Արզնի Էքսպրես» ՍՊ ընկերությունը գործող է, իսկ լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:

3.5 ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տվյալների համաձայն՝ Հակոբ Բալասյանի կինը՝ Աննման Ղուկասյանը 2006 թվականից հանդիսանում է «Ջրաքար» ՍՊ ընկերության 100% բաժնեմասի սեփականատերը և գործադիր մարմնի ղեկավարը: Պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքում առկա տվյալների համաձայն՝ «Ջրաքար» ՍՊ ընկերությունը գործող է, իսկ լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:

3.5 Հակոբ Բալասյանը կնոջ՝ Աննման Ղուկասյանի «Արզնի Էքսպրես» և «Ջրաքար» ՍՊ ընկերությունների բաժնեմասերի վերաբերյալ տվյալները չի հայտարարագրել Հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում:

3.6 Հակոբ Բալասյանը կնոջ՝ Աննման Ղուկասյանի «Արզնի Էքսպրես» և «Ջրաքար» ՍՊ ընկերությունների գործադիր մարմնի ղեկավար լինելու վերաբերյալ տվյալները չի հայտարարագրել Հայտարարագրի «Ե.2. Ներկայացվածությունն առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում:

3.7 Հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում ներկայացված է կնոջ՝ Աննման Ղուկասյանի՝ «Ջրաքար» ՍՊ ընկերության տնօրեն լինելու տվյալը:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները.

4.1 Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի իմաստով՝ հայտարարատու պաշտոնատար անձինք են (...) համայնքների ղեկավարների (...) պաշտոն զբաղեցնող անձինք:

4.2 Օրենքի 42-րդ հոդվածի (Շահերի հայտարարագրի բովանդակությունը) 1-ին մասի համաձայն՝ հայտարարագրի՝ «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն կամ որի իրական շահառու են հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, բաժնեմասեր) չափը, մասնակցությունը ձեռք բերելու կամ իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն:

4.3 Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայտարարագրի՝ «Ներկայացվածությունը առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում նշվում են այն կազմակերպության անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն, որի կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում ներկայացված է հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, ինչպես նաև այդ կազմակերպությունում անձի կարգավիճակը:

4.4 Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:

4.5 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի

Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.6 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.7 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինն ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.8 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.9 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

4.10 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է.

Օրենքով սահմանված հայտարարագրման ենթակա տվյալներին վերաբերող իրավակարգավորումներով սահմանված պահանջներն ամբողջական կերպով ներկայացված են հայտարարագրերի լրացման էլեկտրոնային համակարգում, որտեղ հայտարարատուի կողմից լրացվում են Օրենքով պահանջվող վերաբերելի տվյալները:

Առաջնորդվելով նշված որոշմամբ սահմանված հայտարարագրի լրացմանը ներկայացվող պահանջներով՝ Հանձնաժողովը հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս սխալ կամ ոչ ամբողջական տվյալների ներկայացման արարք:

Սույն գործով ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավար՝ Հակոբ Բալասյանը, Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, որպես հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձ, 2024 թվականի ապրիլի 5-ին ներկայացված Հայտարարագրում թույլ է տվել Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված զանցանք՝ Հայտարարագրում անզգուշությամբ ներկայացրել է ոչ ամբողջական տվյալներ, այն է.

Հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում չի հայտարարագրել կնոջ՝ Աննման Ղուկասյանի

«Արզնի Էքսպրես» ՍՊ ընկերության 50% բաժնետեր և «Ջրաքար» ՍՊ ընկերության 100 % բաժնետեր լինելու տվյալը, որը պարտավոր էր հայտարարագրել Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն:

Հայտարարագրի «Ե.2. Ներկայացվածությունն առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում չի հայտարարագրել կնոջ՝ Աննման Ղուկասյանի «Արզնի Էքսպրես» և «Ջրաքար» ՍՊ ընկերությունների գործադիր մարմնի ղեկավար լինելու տվյալը, որը պարտավոր էր հայտարարագրել Օրենքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն:

Միաժամանակ, Հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում հայտարարագրել է կնոջ՝ Աննման Ղուկասյանի «Ջրաքար» ՍՊ ընկերության տնօրեն լինելու տվյալը:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 21-րդ հոդվածը սահմանել է, որ եթե կատարված վարչական իրավախախտումը նվազ նշանակություն ունի, գործը վճռելու համար լիազորված մարմինը (պաշտոնատար անձը) կարող է խախտողին ազատել վարչական պատասխանատվությունից և բավարարվել բանավոր դիտողությամբ:

Արարքի նվազ նշանակությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ թեև ձևականորեն արարքը կարող է պարունակել Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով սահմանված արարքի հատկանիշներ, սակայն ֆիզիկական կամ իրավաբանական անձին, հասարակությանը, պետությանը այնպիսի էական վնաս չի պատճառվել, որի հիմքով սահմանված պատասխանատվությունը դիտարկվի համաչափ: Նվազ կարևորությունը կիրառելիս անհրաժեշտ է հաշվի առնել խախտման բնույթը, դրա որակական կողմը, ինչպես նաև խախտում թույլ տված անձի վերաբերմունքը խախտման նկատմամբ:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (**ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի**) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (**ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի**) գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Խախտման հիմքով պատասխանատվություն սահմանելու հարցը որոշելու համար Հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է յուրաքանչյուր գործով գնահատել, արդյո՞ք տվյալ խախտումը հանգեցրել է նորմով պաշտպանվող իրավահարաբերությունների խաթարմանը: Այս առնչությամբ էական է խախտման (արարքի) որակական կողմը:

Շահերի վերաբերյալ տվյալների հայտարարագրման օրենսդրական նպատակը կայանում է պաշտոնատար անձի գործունեության թափանցիկության ապահովումը, իր հետ փոխկապակցված անձանց շրջանակի բացահայտումը, ինչպես նաև շահերի բախման հնարավոր իրավիճակների կանխարգելումը:

Տվյալ դեպքում Հանձնաժողովն արձանագրում է, որ ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավար՝ Հակոբ Բալասյանը Հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում չի հայտարարագրել կնոջ՝ Աննման Ղուկասյանի «Ջրաքար» ՍՊ ընկերության բաժնեմասի վերաբերյալ տվյալը, իսկ «Ե.2. Ներկայացվածությունն առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում չի հայտարարագրել կնոջ՝ Աննման Ղուկասյանի «Ջրաքար» ՍՊ ընկերության գործադիր մարմնի ղեկավար լինելու տվյալը, մինչդեռ նույն Հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի

ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում ներկայացրել է կնոջ՝ Աննման Ղուկասյանի «Ջրաքար» ՍՊ ընկերության տնօրեն լինելու տվյալը:

Այս առնչությամբ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նշել, որ թեև Հակոբ Բալասյանն իր Հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում չի հայտարարագրել կնոջ՝ Աննման Ղուկասյանի «Ջրաքար» ՍՊ ընկերության բաժնեմաս ունենալու, իսկ «Ե.2. Ներկայացվածությունն առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում կնոջ՝ Աննման Ղուկասյանի «Ջրաքար» ՍՊ ընկերության գործադիր մարմնի ղեկավար լինելու տվյալները, այդուհանդերձ նույն Հայտարարագրի «Ա.2. Հայտարարատու պաշտոնատար անձի ընտանիքի անդամների մասին տվյալները» բաժնում հայտարարագրելով կնոջ «Ջրաքար» ՍՊ ընկերության տնօրեն լինելու փաստը, ըստ էության, բացահայտել է նշված ընկերության հետ իր Օրենքի 33-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետի իմաստով գոյություն ունեցող փոխկապակվածությունը, որի պարագայում հնարավոր է դառնում ապահովել օրենսդրի կողմից հետապնդվող նպատակի իրագործումը՝ հայտարարատու պաշտոնատար անձի շահերի բովանդակության բացահայտումը, վերջինիս գործունեության նկատմամբ վերահսկողությունը, շահերի թափանցիկությունը, ինչպես նաև շահերի բախման հնարավոր իրավիճակի կանխարգելումն ու կառավարումը:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավար՝ Հակոբ Բալասյանի կողմից կատարված վերը նշված խախտումը հանրային վտանգավորության տեսակետից ունի նվազ նշանակություն, քանի որ, ըստ էության,ապահովվում են պետական պաշտոն զբաղեցնող անձի հանրային հաշվետվողականության, հանրային գործունեության նկատմամբ վստահության, պետական պաշտոն

զբաղեցնող անձի կոռուպցիոն ռիսկերից զերծ գործունեության՝ օրենսդրի կողմից հետապնդվող նպատակները:

Հանձնաժողովը նաև արձանագրում է, որ ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավար՝ Հակոբ Բալասյանը Հայտարարագրի «Ե.1. Մասնակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում չի հայտարարագրել կնոջ՝ Աննման Ղուկասյանի «Արզնի Էքսպրես» ՍՊ ընկերության բաժնեմասի վերաբերյալ տվյալը, իսկ Հայտարարագրի «Ե.2. Ներկայացվածությունն առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում կնոջ՝ Աննման Ղուկասյանի «Արզնի Էքսպրես» ՍՊ ընկերության գործադիր մարմնի ղեկավար հանդիսանալու վերաբերյալ տվյալը:

Միաժամանակ, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նշել, որ Աննման Ղուկասյանի «Արզնի Էքսպրես» ընկերության բաժնեմաս ունենալու և գործադիր մարմնի ղեկավար լինելու մասին տվյալները որևէ կերպ բացահայտված չեն Հակոբ Բալասյանի Հայտարարագրում:

Այս մասով Հանձնաժողովը արձանագրում է, որ «Արզնի Էքսպրես» ՍՊ ընկերությունը գործող կարգավիճակ ունեցող ընկերություն է, որպիսի պարագայում, Հանձնաժողովի գնահատմամբ, մեծ է շահերի բախման տեսանկյունից հնարավոր ազդեցության ռիսկը, հետևաբար, հայտարարատու պաշտոնատար անձի կողմից ներկայացվող հայտարարագրում ընտանիքի անդամի շահերի հայտարարագրումն Օրենքի ձևական պահանջ չէ, այլ Օրենքով պահանջվող տվյալ, որի միջոցով ապահովվում է հայտարարատու պաշտոնատար անձի հանրային վերահսկողության տեսանկյունից հանրային հաշվետվողականությունը, շահերի հնարավոր բախման իրավիճակները հսկելու և կանխարգելելու հնարավորությունը: Հայտարարագրման համակարգը նպատակ է հետապնդում հանրային գործիչների և քաղաքացիական ծառայողների վերաբերյալ տեղեկությունների բացահայտման միջոցով ձևավորել

պետական ինստիտուտների նկատմամբ հանրային վստահություն և բարձրացնել նրանց գործունեության թափանցիկությունը: Այն օժանդակում է հստակեցնել ապօրինի հարստացման կամ այլ անօրինական գործողությունների ամբողջական պատկերը՝ տրամադրելով լրացուցիչ ապացույցներ, հնարավորություն է տալիս բացառել շահերի բախման իրավիճակները, բացահայտել պետական պաշտոն զբաղեցնող անձանց կողմից անհամատեղելիության պահանջների հնարավոր խախտման դեպքերը և բարձրացնել հանրային ծառայողների բարեվարքություն աստիճանը:

Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածը նպատակ է հետապնդում ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) գործունեության թափանցիկությունը և հնարավոր կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Հակոբ Բալասյանի Հայտարարագրի «Ե.1. Մանակցությունն առևտրային կազմակերպություններում» բաժնում կնոջ՝ Աննման Ղուկասյանի «Արզնի Էքսպրես» ՍՊ ընկերության 50% բաժնետեր և գործադիր մարմնի ղեկավար լինելու վերաբերյալ տվյալները չհայտարարագրելու վերաբերյալ Հանձնաժողովն արձանագրում է, որ նշված իրավախախտումն ունի էական նշանակություն, քանի որ վտանգում է Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով պահպանվող հասարակական շահը՝ ապահովել պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) հանրային հաշվետվողականությունը, վերջինիս հանրային գործունեության նկատմամբ վստահությունը, պետական պաշտոն զբաղեցնող անձի (ինչպես նաև վերջինիս ընտանիքի անդամի) գործունեության թափանցիկությունը և հնարավոր

կոռուպցիոն դրսևորումների բացահայտումն ու դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը:

Անդրադառնալով Հակոբ Բալասյանի կողմից ներկայացված պարզաբանմանն առ այն, որ համապատասխան աղյուսակի վերնագրում գրված չի եղել, որ իր ընտանիքի անդամների շահերը ևս պետք է հայտարարագրվեն, այդ իսկ պատճառով ինքը կարծել է, որ միայն իր վերաբերյալ տվյալները պետք է հայտարարագրի, Հանձնաժողովը արձանագրում է, որ բերված հիմնավորումն անհիմն է, քանի որ Օրենքի 34-րդ հոդվածի համաձայն Հակոբ Բալասյանը գույքի, եկամուտների, շահերի և ծախսերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն կրող անձ է, միևնույն ժամանակ Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ «Մասնակցությունը առևտրային կազմակերպություններում» բաժնում նշվում են կազմակերպության անվանումը, որի հիմնադիր են կամ որի կանոնադրական կապիտալում մասնակցություն ունեն կամ որի իրական շահառու են հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) նրա ընտանիքի անդամները, կազմակերպությունում ունեցած ուղղակի կամ անուղղակի մասնակցության (փայեր, բաժնետոմսեր, **բաժնեմասեր**) չափը, մասնակցությունը ձեռք բերելու կամ իրական շահառու դառնալու օրը, ամիսը, տարին, կամ որի կառավարման մարմիններում ընդգրկված անձանց իրավասու են նշանակելու կամ ազատելու հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) **նրա ընտանիքի անդամները**, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն: Սույն մասի իմաստով իրական շահառու է համարվում «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» օրենքի հիման վրա իրավաբանական անձի իրական շահառու հանդիսացող անձը, իսկ Հայտարարագրի՝ «Ներկայացվածությունը առևտրային կազմակերպությունների կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում» բաժնում նշվում են այն կազմակերպության անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը, հասցեն, **որի կառավարման, վարչական կամ վերահսկողական մարմիններում ներկայացված է**

հայտարարատու պաշտոնատար անձը և (կամ) **նրա ընտանիքի անդամները**, ինչպես նաև այդ կազմակերպությունում անձի կարգավիճակը:

Ինչ վերաբերվում է Հակոբ Բալասյանի այն դիրքորոշմանը, որ արձանագրված խախտումը հանդիսանում է լրացման կարգի խախտում, ապա Հանձնաժողովը նշում է, որ հայտարարագրերի լրացման կարգի խախտում է որակում այն դեպքերը, երբ հայտարարագրման ենթակա տվյալը լրացվել է սխալ ենթաբաժնում: Այն դեպքում, երբ հայտարարատուի ներկայացրած տվյալին վերաբերող որևէ տվյալ չի լրացվում համապատասխան դաշտում և լրացվում է այլ ենթաբաժնում՝ հայտարարատուն թույլ է տալիս հայտարարագրի լրացման կարգի պահանջների խախտման արարք, մինչդեռ, Օրենքով պահանջվող հայտարարագրման ենթակա առանձին տվյալները չներկայացնելու կամ սխալ ներկայացնելու դեպքում՝ թույլ է տալիս ոչ ամբողջական կամ սխալ տվյալների ներկայացման արարք: Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում նշել, որ տվյալ դեպքում հայտարարատու պաշտոնատար անձի կողմից Հանձնաժողով ներկայացված Հայտարարագրում տվյալները ընդհանրապես չեն ներկայացվել, որը չի կարող դիտարկվել որպես լրացման կարգի խախտում: Ինչ վերաբերում է իրավախախտումն առաջին անգամ արձանագրելու հանգամանքին, ապա գործող օրենսդրության համաձայն՝ տվյալ խախտումն առաջին անգամ հայտնաբերելը որպես վարչական պատասխանատվությունը բացառող հիմք սահմանված չէ օրենսդրությամբ, ուստի Հակոբ Բալասյանի կողմից ներկայացված պարզաբանումն իրավախախտումը գնահատելու և վարչական պատասխանատվություն սահմանելու համար որևէ նշանակություն չի կարող ունենալ:

Ամփոփելով ամբողջ վերոնշյալը, և միաժամանակ հաշվի առնելով, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված արարքի համար նախատեսված է վարչական պատասխանատվության ոչ հստակ սահմանաչափ (*փուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով*), Հանձնաժողովն արձանագրում է, որ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով վարչական տույժ

կիրառելիս պետք է հաշվի առնել ինչպես խախտման բնույթը, այնպես էլ պատասխանատվությունը ծանրացնող կամ մեղմացնող հանգամանքները:

Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով առկա չէ Օրենսգրքի 34-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը ծանրացնող որևէ հանգամանք, ինչպես նաև առկա չէ Օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված վարչական իրավախախտման համար պատասխանատվությունը մեղմացնող հանգամանք:

Ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով, 244.17-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավար Հակոբ Սուրենի Բալասյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի՝ 200,000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Տուգանքը պետք է վճարվի իրավախախտողի կողմից գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի «նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հակոբ Սուրենի Բալասյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

4. Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո Հակոբ Սուրենի Բալասյանին տրամադրել եռօրյա ժամկետ Հայտարարագրի համապատասխան բաժնում ուղղումներ կատարելու համար:

5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ